

ՀԱՄԱՇԽԱՐՀԻ ՀԱՆԴԻՍԱԴՐՈՒԹԻՒՆ Ի ՎԵՆԵՏՍ

Գ Ե Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Զ . — Ն Կ Ա Ր Զ Ո Ւ Թ Ե Ւ Ն



Օւնօր է հաւարակաց, որ ի գարնան 1893 ամին, բովանդակ խտալիա մեծ յօժարութեամբ կու պատրաստուի տօնել իւր բազակալ գոզից արծաթի հարսանիքը, կամ անոնց պսակման քսան է հնգամեայ տաւ դնարաճ :

Վենետիկոյ Քաղաքական ժողովն այլ՝ ուզելով այս ազնուական մրցանաց բաժանորդ լինել, բայց աւելի իմն տեսող է արժանաւոր ցոյցով մի, որոշեց անցեալ տարւոյ 19 աւարիի նստիկ մէջ, առին երկու տարի անգամ մի՝ Գնդարոշեստից Հանդիսադրութիւն բանալ, սահմանելով յատկացրնել առ այժմ՝ տասն հազար փրակկաց գումար մի՝ իրրու մրցանակ ընտրելագոյն արուեստագիտական գործին, և դիպտածական եկամուտները տալ ի նպաստ քաղաքային բարեբարական հաստատութեանց, Քաղաքական ժողովին այս գեղեցիկ սկզբնաւորութեամբ՝ հետեւեցան միաւնայն նա և գտատական և խնայողութեան արկել ժողովքն, և վնեցին նուիրել՝ այս առաջին Հանդիսադրութեան՝ իւրաքանչիւրն հինգ հինգ հազար փրակկաց գումար :

Այսպիսի պատրաստութեամբ կազմուեցաւ առանձին Քենիկ Յանձնաժողով մի, մաւաւս քաղաքական ժողովին և մասամբ եւս՝ վենետիկեցի արուեստագիտաց ընկերութեան ընտրուած անձներով, որոյ պարտք դրուեցաւ իմաստութեամբ ի գլուխ տանել՝ այս ընդհատ ընդհատ յաջորդող Հանդիսադրութեանց կերպին և արտաքին կարգաւորութիւնը : Եանձնաժողովն իսկոյն միաւնայն փափագ յայտնեց, որ այս Հանդիսադրութիւնը միայն խալական արուեստով յաւհմանափականին, այլ աւելի ընդարձակ երպատակ մի ցոյց տային, համաշխարհի գեղագիտական արդիւնաբերութեանց եւս ըն-

կալու լինելով : Վասն զի — կ'ըսէր Եանձնաժողովն — ազգացախառն Հանդիսադրութիւն մի՝ մեծապէս եւս պիտի յանկուցանէ հասարակութիւնը՝ իւր մէջ հաւաքուած մեծամեծ օտարազգի հանձնարներու արդեանց համբաւով, միանգամայն եւս պիտի ընծայէր, այն ամենայն գիտեց՝ որ կարողութիւն չուէին յերկար ձանապարհորդութիւններ ընելու, հետք՝ միաժողով տեսնելու, ձանկնայու և զոգակշռելու գեղագիտութեան բազմազան արդիւնքը և յայտնապէս օգտակելու : Վերջապէս, պիտի ձոխացրէր բնիկ տեղացի գեղագիտութեան հետամուտ երիտասարդաց իմացական ժառանգութիւնը, որք տեսնելով իրենց օտարազգի արուեստակցաց գործեր, պիտի յորդորուին աւելի մեծ և ընտիր արդիւնք յառաջ բերելու :

Եանձնաժողովն ուզելով Հանդիսադրութեան աւելի բարձր դիրք տալ և արժանիքն աւելցրնել, կ'առաջարկէր միանգամայն՝ ամփոփել ի ցոյց դրուելի գործոց թիւն, արդեւ ուրիշ Հանդիսադրութեանց ժամանակ յաջորդութեամբ ի գործ ածուած հրաշիրանաց, դրութեամբն : Իսկ ազատութեամբ յղեցող միջին՝ ընտրելով զայն միայն, զորս պատկանատու ժողով մի՝ արժանի պիտի դատէր ի ցոյց դրուելու :

Գլխաւոր կէտերն այսպէս որոշուելէ վերջ, Վենետիկոյ քաղաքապետն, որ է նա և նախագահ Եանձնաժողովին, սոսկական ռձով դիմեց ամենեւն հալկաւոր օտարազգի արուեստագիտաց, հարցընելով՝ բէ արդեւ պիտի ռզե՞ն մասնակցիլ այս արուեստագիտական ձեռնարկութեան, և յանձն առնուլ Հովանաւորող Յանձնաժողովի մի անդամակցել :

Էրբ ժամանեցին հաճութեանց թղթեր, և

այնչափ քաղաքաբնակ, քաղաքագրի և լի շերտ մտերմութեամբ, վնենտկեցոց սիրտն շնորհաբար մեծ վստահութեամբ, զայս եւս իրոք մեր հաստատիք մ'ընդունենով, որ վնենտկոյ անունն միշտ կու գարտուցանէ հին զգացումը, այն սքանչւոյցման և գոգցման ընտանեկան մտերմութեան զգացումն, ամեն անոց արտի մէջ՝ որ սիրող են գեղեցկիւն, ոյսպիսի և շինի շնորհաբար խօսիւն և հայրենիքն՝ որում պատկանէին և

Քաղաքական խորհուրդն անցնայ տարաւոր մարտի 30-ին գումարման մէջ, ընդունեցաւ ամբողջական փննիւ Յանձնաժողովին առաջարկութիւնը, և ամիս մի յետոյ սկսեցան մեր շինութեանց աշխատութիւնքն, որ կարծես այնչափ աւելի փութով և տոկոսնուքեամբ յառաջ վարեցան, որչափ որ աւելի ցարտ և երկար հանդիպեցաւ ձմեռուսն և զանազն անցնայ տարի, յորում և աւարտեցան իսկ և

Այդ վնենտկեցիք մեծ հանդիսով բացած և յառաջացուցած իսկ շինելով Հանդիսադրութիւնը և ամսոյս 3-ին (նոյեմբ.) փակելու պատրաստուելով, մեծ յուսով են այսու եւս և մեծ արդիւնք տեսնելու յաջորդ մերձաւոր քաղաքական ժամանակ և իր տեսչութեան վերջ աշխատեցան ժամանակ և մեր բնիկ ազգային հանձնարող փայլուն արդեանց. որք մեր մէքն այլ պակաս չեն, շնորհիւ մեծապատիւ պարոնայ Ալֆազովսկեայ, Ռաշիւնադեանի, Մարքեանի և այլոց, որոց յաջող ելիւք պատանի սերունդն այլ քաջաշնորհ մեր մէջ՝ եւս աւելի ընտրելագոյն ապագայի քեանկութեան և

Այս հակիրճ տեղեկութեան վերջ, քաղաքականութեան կու դեմք հոս, հմուտ զննադատ Պոմպիւս Դիմեայ իտալացոյն՝ նկարագրութեան ներկայ Հանդիսադրութեան և

Հ. Դ. Գալ.

Հանդիսագրութեան գործոց գլուխն կամ հրաշակերտն՝ է նոյն ինքն վնենտիկ, այս մեր հիւանդի քաղաքն. ուր ամենայն ինչ առուեստութիւն յորինուած է մարդու ձեռք. որ ի բաց թողած է աստի բուսականութիւն և կենդանիք և ամենայն նմանութիւն կենդանի

իրաց, և ստեղծած է իրեն այս իւր լիմանկերտ աշխարհը, այս իւր ճարտարապետական հրաշալիքն բնականաբար, ուղեւոր որ այս ամենայն՝ բուն իրօք գեղեցիկ լինի, արուեստի և նոխարութեան ուժով. ընծայելով զայն՝ ոյ թէ ժողովարան մի հրաշակերտից, այլ զնա ինքն միակ հրաշակերտ, և միանգամայն այնպիսի գերազանց և հաստատուն, որ յաղթկու հանդիսանայ ամենայն նմանեաց և անէ ի դարս։ Այս այս՝ հետաքննիւն այցելուաց զարմանքն՝ անմասն է, զի գլխովին վնենտիկ՝ արուեստի միակ և ամբողջական հրաշակերտ մի՛ է և տեսչիկ հայրենիք անոնց՝ որ առուեստը կու սիրեն և անոր գերազոյն ծիծաղը կ'ըմբռնեն։

Հանդիսագրութիւնն շատ լաւ յաջողած է, միայն թէ անընդհատ յաջորդութիւնը զանազան զարգաց, ազգաց և վերստուութեանց, դժուար կ'իմացնեն՝ թէ մին է բուն իսկ այժմու գեղագիտական գաղափարն, որ ժամանակիս արուեստը կու կերպարանաւորէ։ Դարձեալ՝ հոն կու պակասին եւրոպական առուեստին ամենէն զօրաւոր աղոյթանք. և թէ ոմանց գտուին եւս, անուն միայն դրկած են՝ և ոչ թէ իրենց գործօնութեան նշանաւոր ճաշակ մի։ Չոր օրինակ, Բնչակէս կերպիւն է գաղափար մի կազմել, Ամա Տաղեմայի, լատին հին նկարութեան հօգորդ վերածնողին՝ արուեստագիտութեան մասին, այն թըգաչափ նկարէն, որ սակայն փառահեղ տիպ ունի և մանրամասնեայ (minutieuse) շնորհալիութիւն, ներկայացնելով տիկին մի՝ մեր օրերու տարագով զգեստաւորեալ։

Դազման Բուլերէս, Բրիտանացի քերթող նկարիչն եւս, յիշատի, ի հանդէս դրած է քնքղ Տիւրամային Յիսուս մանկամբ. — նկար, որ զիտողի ուղեյն մէջ յառաջ կու բերէ անոյ թախծութիւն. — բայց այդ նկարն արդէն նորութեան հրապարակ չունի, զի շատ անգամ Ժանօթ է՝ փորագրութեամբ և լուսանկարաւ։

Միով բանին՝ չկայ այնպիսի գործ, որ ըստ նկարաց ամբողջական բացատրութեան, նոր « յայնտութիւն » (révélation) մի լինի. չկայ նոյն իսկ գլուխ գործոց կամ արուեստի հրաշակերտ։

« Արդ, իտալացիցմէ Եսկելով, իսկոյն այս հարցն կու յուզուի: արդեօք իտալիա հօս ինչ գեր կու խաղայ. և կու պատասխանեմք առանց վարանելու. բա՛ւ այլ ոչ լաւագոյն»:

Որպէս զի արուեստագիտական գործ մի ընտիր կամ ըստ գեղագիտաց կենդանի հաւ մարուի, պէտք է առ հատարակ հանդիսանայ և ռամկաց և գիտնոց: Ելթէ միայն ռամիկը հիացընէ, աննշան է. իսկ եթէ լոկ գիտունքը յանկուցանէ, շատ նուրբ:

Արդ այս երկու յատկութիւններ իրեն վրայ ճշմարտող իտալական գործ մի հօս չենք տեսներ. զի մերթ յատկութիւններէս մին, մերթ այլ միւսն կու գորանայ յաճախ: Այսպէս, օրինակի համար, փրանկիսուս Պաւլոս Միքեատեայ նկարին առաջեւէն ժողովուրդն հարեալացի նայուածքով մի կ'անցնի, մինչդեռ հասկացող արուեստագետն՝ այն ընդարձակ տեսանկիւն (toile) վրայ՝ այնպիսի արժէք կու գտնէ, որ բազմաց անզգայն են: Ելթէ ներուի մեզ ըսել, «ա՛ւ աւելի նկարի մի նախագիծ է, քան թէ բուն իսկ նկար. այլ և այսու հանգեւն Միքեատեայ արվէն զայն վաճառած է 30,000 փրանկաց՝ տէրութեանս արտաքին գործոց նախարարին, պր. Բլանկին. բայց ոչ բուն այս նկարը, գոր հօս ի հանդէս հանած է, այլ նա տար նման ուրիշ մ'այլ պիտի նկարէ՝ իւր արուեստագիտի հազուագիւտ խզմամտութեամբ, բայց աւելի փոքր տարածոցով և համեմատութեամբք. որով նկարին արտայայտութիւնն եւս աւելի որոշ և ազգու կու լինի: Նկարին նիւթն ծանօթ է. զի ամբողջութիւնն գրեթէ կրկնութիւն մ'է իւր միւս նկարին, զոր 1831-ի ի ցոյց գրաւ ի Միլան. և է, «Դուստր Բոլիոյ»:

Անպատուած գեղջկուհին կ'անցնի իւր գիւղակցաց միջով, որք լերին նեղ ճանապարհին վրայ դատարկ տարածուեր կեցեր են. զփութուցանելով անոնց մէջ՝ չարամիտ զրուստիք, ըղձեք, փոցէ և գլխութեան ակար զգացմունք: — Այս զանազան զգացմունք՝ հիանալի են, և զլիոց կամ զիմաց ընտիր բացատրութիւնքը՝ նկարը կ'ամբողջացրեն: Թիրաւի կան նա և թերութիւնք. ինչպէս, առաջին և երկրորդ մակարդակի կամ տեսարանի մէջ (plat) համեմատութիւն պակաս է. երկրորդ հազիւ ձե-

ւացած է, իսկ մեծ լերանց շղթայն՝ որ վերիւրեանց աւարտուած են, տեսարանի մէջ շատ ցուրտ ցցուած են: Ենթոյ քաղաքիտին այլ, որ կարծես ըրպէաբար լուսանկարուած է, այնպիսի հանդիսական չ'ընծայուիր դիտողին: Դարձեալ այն մարդկանցմէ ոմանց զգեստոց տակ՝ հազիւ կ'իմացուի թէ մարմին կայ: Ըստ այսմ՝ և նկարն աւելի թատերաբեմի տեսարանացոյց նկարուց կու նմանի: Բայց սակայն, արուեստագէտն կարողացել է ժամանել արուեստագիտական բացատրութեան զագաթ. նակեւին և յաղթանակ տարեր է: Սոյն նկարին մէջ հետաքննական է նա և նիւթական արուեստն (l'art technique): Միքեատեայ վերադարձեր կամ հետեւեր է իտալացի նախկին մեծամեծ արուեստագիտաց չրաներկին (détrempe), որ զուրկ է արդի իւղաներկ նկարուց պայծառ և ողորկ երեւութէն:

Ընդհանրական ամբոյն կու խռնի Յակաւր Գրոսսեայ նկարին առաջ, որ է «Վերջին Ժողով»: Հանդիսագրութեան կարգաւորչ յանձնաժողովն, հրաւիրեց մի քանի տեղեակ անձինք, խորհրդակցելու անոնց հետ նկարին բացարկանութեան մասին: Թիրաւի գեղարուեստի պատիւ բերող գործ մ'է, բայց ոչ և կիրթ և աշխիւ զգացման. թողովը իսկ կրօնական տեսակէտը: Բարոյականութեան խնդրոյ մասին՝ որ և է բարեզգած և զգոն անձինք կարող էին շատ յարմար դատաւոր լինել, և պէտք չկար տեսնենապէս մուսայից պաշտօնեայք ի ժողով գումարել: Առ այս բուսական էին նոյն իսկ մի քանի պարկեշտ ընտանեաց հայեր. որք, — կ'ուզեմք, յայտնապէս բռնել թէ և յայսմ մեր մեծպատուի բարեկամաց հետ տարածայն գտնուիմք, — պարզապէս անբարոյական պիտի դատէին այդ նկարը: Վասն զի յայտնապէս ամենացած անվայելչութիւն է, որ քանի մի հոլանի անպարկեշտ կանայք տեսնուին՝ աղօթից նուիրուած սրբազան տեղւոյն մէջ, և իրենց ներկայութեամբ անարգեն այն յետին նուիրական վայրկեանը, մահու օրհասը: Անվայել՝ և ոչ թէ արուեստագէտական է, նկարել այն զագաղը եկեղեցւոյ մի մէջ, և շուրջ պատած այն անպարկեշտ դիւանական խմբով. զի այս ոչ թէ գիտական բարեզգածութիւն, այլ միայն չարաշար տը-

հանութիւն, զգուանք և արհամարհանք կու
պատճառէ : Ո՛հ, այն դժբաղա հրապուրողին
գերազդոյն վէպն, որ երազել և խոկալ կու
տայ՝ Ելլիթրայի արուստաբը, Կոմմենդատորի
այն ահեղ տեսիլն, — այս ամենքն այլ
միանգամայն՝ անարգուեր անցեր գացեր են
այդ ռամիկ և հասարակ նկարին մէջ : Նկա-
րին քննողատից ոմանց հարցմանց՝ պատաս-
խաներ է, թէ ոչ մի իրականութիւն ներ-
կայացընել ուզած չէ, այլ թէ սա պարզապէս
խաբ մտաց ծնունդ մ'է, ըսել է ինքն այլ՝
Արմանդոյի քերթողին հետ : Բայց ապա ինչ
բանի համար համարձակել է նմանակցել վէպի
մի, որ ըստ փառաւոր՝ զուգէ հրաշալի գաշտա-
ւորութեամբ՝ զմարդկայինն ընդ գերագունին :

Արդեօք պատկերահանն ներկայացընել ու-
զեր է մարդ մի, որ մահուան երազոց մէջ
կու տեսնէ այն իրեր՝ զորս աշխարհիս վրայ
աւելի տիրեր է : Բայց այս դէպքի մէջ եւս,
եթէ ուզեր այդ գաղափարը բացատրել, պէտք
էր զայնս ներկայացնէր անորոշ կամ ամպային
ձեւերով, որով տեսարանն այլ աւուրջի եւ
բեւոյթ մ'առնուր : Այն ժամանակ, ինչպէս
երեւակայեց Բոլըլէր իւր Միհնաթ և Ունաթի
խօսակցութեան մէջ, գուցէ կարելի լինէր
երեւակայել մեռելոյն միմատիպ ճակատին
տակ՝ զեռ եւս զգացողութեան մնացորդ մի,
թողած աշխարհին յիշատակ մի : Սակայն,
ընդ հակառակն, հօս տեսարանն սիրտ խառնող
իրականութիւն մի կու ներկայացընէ : Ուրիշ
բան չի մնար ըսել՝ եթէ ոչ, զի ռամիկ գա-
ղափար մի՝ ռամիկ եւս և ցած ձեւերով
զատկոցութեամբ է : Հօսակ, չգիտցող թան՝ թէ
ինչ պատճառաւ ուզեր է նկարիչն, որ այն
անպարկիշտ անձանց ներկայութեամբ՝ այն
սրբազան տեղն և այն ահագին և նուիրակին
վայրկեանն՝ այսպէս ապականուի և անարգուի :

Նմանապէս ռամիկօրէն յղաքուած գաղափար
մ'է և Հեկտոր Տիտոյի հոլանին, որ թէ և
խիստ յանկուցանող նկարիչ է, բայց այս
Հանդիսադրութեանս մէջ իւր համբաւէն սա-
կաւ ինչ ստոր կու մնայ : Պատկերն կու ներ-
կայացընէ « զԲալստ », որ կու հոլովէ խորհրդ-
գաւոր անիւր : Լաւ նկարուած և լաւազոյն եւս
գծադրուած է. ընտիր է նա և այն կնոջ և
անուին յեցած մանկան խմբակն. այլ այդ


թիկնադարձոյց խոշոր կինն՝ որ բախտը կու
ներկայացընէ, ռամկական է : Գուցէ ինքնին
արուեստագէտն ուզեր է ցուցընել՝ թէ արդէն
իսկ բաղդի տգեղ կին մ'է. — եթէ այս
եղած է գաղափարն, ապա յաշողած է զայդ
կատարելապէս պատկերել : Դանտէի գերա-
զանցօրէն գաղափարածն՝ աղագինամ Դի-
ցուհին

....., զոր յառաջ կ'ուզեն խաշել
Նոյն իսկ անունը, որ պէտք էին դիմելը դրուստել,
Հայհոյելով անիծելով և չարաշար համբաւելով :

վերետկցի նկարչիս տառտակին վրայ փո-
կուեր և դրամագրութեան կնոջ մի նմաներ
է : Դարձեալ, ռամկական են նա և այն Տի-
տոսի միւս « Թափօր » կոչուած նկարի միջի
երկու Զահակիքն, սպիտակ կիսաշապիկ զգե-
ցած : Բայց անոնց միջով տեսնուած կնոջ
կերպարանք մի՝ որ կրծոց վրայ մանուկ մի
սեղմած է, ամենազգայուն է և կու յայտնէ
մեզ՝ նրբամիտ հեղինակիս թանգ արժանիքը :

Ահա հասանք փառաւոր նկարիչ մի՝ Ան-
տոնիոս Մորելլէայ. սակայն, ափսոս, որ և
սա իւր անուան արժանի գործ մի չի յղեց
այս Հանդիսադրութեան : Թիրաւի առանց չա-
փազանցութեան կարող եմք ըսել՝ թէ այս
անուան շուրջը՝ ամենալինջ փառաց ծիածան
մի կու փայլի, մարդոյ և արուեստագիտի
փառաց : Սա կարող է պանծալ միայնակ
յաղթած լինելուն համար ամենազօռարին
արդելից : — Հռովմայեցի մեծանուն պատ-
մագիրն Սալուստիոս՝ ըսած է, որ յաշողա-
թիւնն՝ նոյն իսկ ընտիր հանճար մի կ'ամա-
ցընէ. ըստ այսմ՝ և Դոմինիկոս Մորելլի կա-
րող է ըսել, թէ բովանդակ իւր հանճարն՝
թշուառութեամբ բեղմնաւոր եղաւ : Աղքատ
ծնուա, և այն զեռատի հասակէն ի վեր՝ լի
էր սիրան յուսով, իսկ միտքն՝ արուեստագէտ
լինելու ասկեղոյն երազովը, ուստի և վստահ
նակաւորով՝ միշտ ընդլիճ մաքառեցաւ խաւար
և անստոյգ ապագային : Նա այն տկար խառ-
նուածք ունեցողներէն չէր, որք զվառաւ-
թեանց առջեւ կու լքանին, այլ այն ոգի-
ներէն մին՝ որք կուսի մէջ կրկին զօրութիւն
կու զգենուն :

Այն ամաց մէջ՝ երբ գեռ ի Հռովմ կու
բնակէր, ուր նա կ'ուսանէր գեղարուեստից



M. VON SCHMAEDEL — *Senza patria.*

Մ. ՎՈՆ ՇՄԵԴԷԼ. — Առանց հայրենեաց.



G. FATTORI — *Butteri maremmani.*

Թ. ՓԱՏՏԱՐԻ. — Զիւարթ անդէտրդք Ի Ժախինեայ Զախմախուտս



L. APOL — *Inverno in Olanda.*

Լ. ԱՊՈԼ. — Զմեռն ի Հոլանդիա.




A. HUGHES — *Viola d'amore.*

Ա. ՀԻՅՈՍ. — Զարակ սիրոյ



A. TOMMASI — *Il canto della sfoglia.*

Ա. ԹՈՎՄԱՅԻ. — *Էրգ տերեւաբանցի.*



F. J. DU CHATTEL — *Rive di fiume.*

Փ. Յ. ՇՆՏՅԷԼ. — *Գետափն.*



A. DELUG — *Venti di Marzo.*

Ա. ԴԵԼՈՒԳ. — Մարտի ձորներ




L. TUXEN — *Ritorno dalla pesca al crepuscolo.*

Լ. ՏՆԻՔՍԵՆ. — Դարձ ձկնորսաց ի վերջարշաին.



J. BENLIURE — *Vecchio in preghiera.*
 Յ. ԲԵՆԼԻՍԻՐ. — Ի ճեղքանի յարգութ.



W. FIRLE — *Guarigione.*
 Վ. ՓԻՐԼ. — Ի թշկապիսի.

ճեմարանին մէջ, այնչափ աղքատ էր, որ մինչեւ անգամ ապրուստի կարեւորըն կու պակսէին իրեն. և երեկոյ մի, չարաչար յոգնած և անօթի, հիւանդանոցի մի դրան տուալ կանգ առաւ՝ հացի կտոր մի խնդրելու համար։

Մորեկին մտաց մէջ ամբարելով դասընտիր դպրոցաց (écoles classiques) հմուտ թիւնք և արուեստագիտական հին աւանդութիւնք, նկարեց ի հոռմ «Տիրամայր շուրջ պատած հրեշտակօք»։ Կանխաւ կու տեսնուէր որ այդ հանճարն ընտրած արուեստին ցուրտ ցուրտ կանոնաց մէջ զսպուելու համար ծնած չէր, և արդէն իսկ սկսած էր անոնց մէջ կոծիլ, նման վանդակի մէջ բանտուած թռչնոյն. ապա և իրեն բանաստեղծ ընտրեց Լորդ Բայրն։

Երբ ի նէապոլիտ վերադարձաւ, իւր միտքը ճոխացած այն անդղիացի մեծ բանաստեղծին երեւակայութիւններով, յայտնապէս մարտնչեալ ճեմարանաց դաշնադրական ցուրտ ոնոյն դէմ (conventions académiques) և իւր «Յեղուակ» (Corsaro) պատկերով սկիզբն առաւ այն շար մի նկարուց, որք իտալական նկարչութեան արուեստին մէջ՝ յեղափոխութիւնպիսի յառաջ բերէին։

Մորեկեայ նկարուց նիւթերն՝ արդէն շատ իսկ ծանօթ են գիտական աշխարհի, և աւելորդ զանոնք դարձեալ շարակարգել, ի օ Պասկերամարտից մինչև Լարա կոմսն, Սիկիլեան երկոյրէք մինչ ի Պոմպէյի Բաղանիք, Տասսուլէ առ Պագգիոս եւ իւր Տիկինն», որպիսի հսկայ քայլեր, որպիսի փառաց ճանապարհ։...

Բայց Մորեկեայ ստուգապէս եզական արուեստագիտի՝ զազափարն՝ աւելի կու տեսնուի՝ այն մի քանի տասնական յօրինուածէն, որոց վրայ շանցեր է նկարչօրէն թարգմանել՝ Աւետարանի գերադոյն բերթուածը կամ Պատմութիւնը, զայն աւելի մեզի մերձեցնելու լով և աւելի մարդկային կամ ըմբռնելի ընելով՝ նիւթապէս պատկերացնումք. և այս այնչափ՝ որ զուցէ կարելի լինի ասել, թէ Մորեկին՝ կրօնական նկարչութեան Ռոմանն է։

Այն Քրիստոսի կենաց սրբազան նկարուց կարգէն է՝ և այս նկարս, զոր Մորեկին յղեց ի ցոյց Վենետիկոյ Հանպիսադրութեանս մէջ, և որ կու ներկայացընէ

«Քրիստոս պաշտօնեցեալ ի հրեշտակաց, և պատկերացընելով Մարկոսի Աւետարանին այս տունը. «Եւ էր նա անդ (յանապատի) զաւուրս քառասուն՝ փորձեալ ի տառանայէ. և էր ընդ զազանս, և հրեշտակք պաշտէին զնա»։ Մեծ նկարչիտ վրայ մեր ունեցած մեծ վարկն՝ չի խափանէր զմեզ բռել, որ նկարս շատ սին է. Երկու հրեշտակքն մեծ կերպարանք ունին՝ բայց միանգամայն ոչ մի խորհրդական արտայայտութիւն, իսկ Յիսուս՝ հասարակ ցեղացոյ մի կու նմանի։ Մեր օրերս այս սրբազան առարկայս չափազանց դժուարին նիւթ կու համարուին, վասն զի այժմ արուեստագիտի մտաց մէջ՝ կրօնական զգացումն խիստ տկարացած է։ Նկարիչն՝ կամ Գիւտաւորէական վիպասանօրէն զգայականութեան կու հակի, ինչպէս Յովսէփ Փերրարին՝ իւր մեծ նկարին մէջ, «Անցցէ իմէն բաժակս այս», — և կամ, ուզելով շատ մարդկօրէն բնծայեցընել Աւետարանին գերազանց իմաստերը, ասականութեան միտելով կու վտանգուին։ Մորեկին գրեթէ միշտ այս երկու թերութեանցմէ ետ կցած էր խուսափել. այլ ոչ նոյնպէս և այս անգամ։

Երթանք այժմ սրահներու մէջ փնտռենք արիշ երեսելի անուններ եւս. այլ, աւել, որ անուանց համբաւայն՝ ոչ միշտ կու համեմատին նա և անոնց զօրծերն։ Օրինակի համար, այն Ե... օրիորդին կենդանագիրն, թէ և ազորկ և փայլուն՝ բայց ցուրտ է, և չես կարծեր՝ որ Յովհաննու Բոլդիինայ լինի, այն յաջողակ նկարչին, որ նկարած է Յովսէփոս վերեւայ հանրածանօթ կենդանագիրը։

Փիլիպպոս Եղարկանայ՝ միակն է, որ իւր զօրուոր հանճարայն բոլոր ուժերու փորձը առաւ, ի հանդէս հանելով իւր այս երկու հրաշալի նկարքը, «Բերգամեան Նախալլէայք» և «Արսէս»։ Այս ճարտարն, իտալական արուեստին վրայ բարեկերպ ազդեցութիւն մի ունեցած է. ցուցընելով և աւուցանելով երիտասարդաց, որ ազնիւ, ճշմարիտ և մեծ արուեստն՝ բնաւ հասարակական կարծեաց պէտք չէ զիջանի։

Արուեստ անաշու՝
Մեծ իւրեք պատճառ։

Եւ սակայն յանձն փիլիպպոսի սքանչացուած

էր աւելի քան զարուեստազէտ՝ նկարիչ մի, որ միշտ մտադիր էր արուճանել օչ թէ հոգին՝ այլ իրականութեան արտաքին պատեանը. իւր զործոց մէջ գիտելի էր այն զարմանալի մտաբանում, միշտ յաղթութեամբ պատկաւած, որով կու ջննայր միշտ՝ աւելի եւս զգալի է ճշգրիտ բնծայեցրնել՝ մատուց համեմատութիւնը և զունոց յարմարաւոր պատշաճութիւնը ։ Բայց իրեն տաստակաց զրպ չէր նշմարուէր բնութեան բանաստեղծութիւնը, և ճարտարիս հոգին չէր երթար միանալոր համայն արարածոց մեծ հագոյն հետ, և սիրան չէր բարախեր ապառում Ալպեանց առջեւ կամ ի տեսիլ հնձալից մարդագետնոց ։ Սակայն կարկանդիք այս երկու դաշտանկարները, (paysage), զորս արգ ի վիճետիկ ի ցոյց դրած է, լիսպատար են բանաստեղծութեամբ, և կու յայտնեն նոր շղթան մի՝ փիլիսոփայութեան կարկանդիք պողպատից և ազիւ արուեստագիտական կենաց մէջ ։

Նմանապէս Սեգանտինին այլ նկարչութեան մէջ քաջիկ եղականութիւն կամ ինքնաստեղծութիւն մի (originalité) ցոյց կու տայ՝ թէ իրբեւ մոտածութիւն կամ գիւտ, և թէ իրբեւ նիւթապէս արուեստ ։ « Դսարծ ի Խննդաւայլ » նկարն՝ կ'ընծայէ կառաձիգ ձիւն մի պատկեր և կառաց միայ զազազ մի, որոյ վրայ նստած են արտասուելից կին և դուստրն մեռելոյն՝ որ ի հայրենիո կու դառնայ. և այս թախմալի խմբին շուրջը՝ հիանալի լեռն, երեւոյթ մի կու պատէ ։ Սեգանտինին գիտէ բնութեան խորին քերթուածը բնորոշակել և « Հոգին այլ իւր հայրենիքն ունի՝ ինչպէս մարմինն », կ'ըսէ թէ՛սփիլ Գոտիէր, և Սեգանտինինայ զաղափարական քերթուածն այլ՝ լեռինք են ։ Իւր ամենէն սիրելի երեւակայութիւնք՝ կու գիտեն միշտ դէպ ի լեռնեքոռ ձիւնապատ սեպեր, սը հողմոց և քերթողաց արքայարանն է ։ Սորա բոլանպակ զործօնեութիւնն՝ լուսութեան, լուսոյ ցումանց և անդորրութեան հրաշալի դաշնաւորութիւն մ'է ։

Սկաստիկ հօս կու յարեմք մի քանի քաղոքածոյ համառօտ ժամօրոքիւնք՝ այն հեղինակաց մասին՝ որոց նկարչական ա-

րուեստին մի մի ժաշակ եւս կ'ընկերեմք յօղոքածին՝ ի գիտօրիւն մեր ընդերքողաց ։ ՄԱՔՍ ՎՈՆ ՇՄԵԴԵԼ. — Երեւալ յԱլպ գրաբուրգ՝ յամի 1856, մայիս 14, և այժմ բնակութեամբ հաստատուած է ի Միւնիխ ։ Լաւ նկարիչ մ'է, որ բնութեամբ աւելի բարոյական է եղերբրգական տեսարաններ կ'ախորժի պատկերացընել, զորս և շատ զգալուն կերպով կու նկարէ ։ Սորա ընտիր զործերէն մին է և մեր հօս ներկայացուցած « Աւանց Ուրբանեաց » նկարն ։ (Տես Ա) ։

ՅՈՎԱԶԱՆԷՍ ՓԱՏՏՈՐԻ. — Երեւալ ի Լիւնոնոյ, յամի 1828, սեպտեմբեր 25, և այժմ կու բնակի ի Փլորենտին, և տոկանեան դպրոցին գլխաւոր նկարաց մին է ։ Սա 1847 տարւոյն աշակերտեցա Փլորենտինոյ ճեմարանին՝ մինչ դեռ հօն կու դասախօսէր ար. Բեզզուլի ։ 1848ին յեղափոխական շփոթք՝ գինքն այլ ցրուեցին ուսումնասիրութենէն, ուստի և մինչեւ 1859 շատ օակաւ արգիւնք յառաջ բերաւ ։ Սպա երբ ճեմարանական օտմանափակ դրութենէն ազատեցաւ, սկսաւ՝ նոր արուեստին, կամ թէ ըսել՝ վերածնեալ նկարչութեան ամենէն ջերմ պաշտպանաց և յառաջ մղողներէն մին լինել. և ձեռք զարկաւ մեծ աշխուժով նկարչօրէն ի լոյս հանել՝ իտալական անկախութեան պատերազմին երեւելի առանձնակ տեսարաներ. որպիսիք են, « Մազինալի Պատեւրազմ » — « Բարձակուկն հեծելազօրուն ի Մոնտեբելլոյ » — « Պաշտպանողական քաւակուկն 49-րդ բանակին ի կուստողա » ։ Նկարչիս սիրելազոյն առարկայն է ձին. առոր բաւական է յիշել ճարտարիս ամենագեղեցիկ նկարն, « Չիալամառ ի հրապարակին Երրորդութեան որ ի Հոլովմ », որ վարձարուեցաւ վէննայի համագալային Հանդիսադրութեան ժամանակ ։ Ահաւասիկ ասոր ճարտարութեան ժաշակ մի « Չիստոր անդէորդք ի Թուլիսնայ Գալանսիտուս » ։ (Տես Ա) ։

ԼՈՒՈՎԻԿ ՓՐԵԳԵՐԻԿ ԼԵՆԻԿ ԱՊՈԼ. — Երեւալ յԱլպ՝ ի 1850 ամին, ուր և կու բնակի ցարբ ։ Սա գրեթէ միշտ իւր աշխարհին տեսարաններ կու նկարէ, ներկայացընելով՝ այն կողմանց ձախնային եղանակին մէջ

ստացած տխուր երեւոյթք, որպիսի է նա և նկարն. « Չմուռն ի Հոլլանդայ » - (Տես Բ) :

ԱՐԹՈՒՐ ՀԻՒԳՍ. — Երեւալ ի Լոնդոն՝ յամի 1832, այժմ կ'ապրի ի Սիւրէյ : Հաջիւ թէ իւր ուսմունքն աւարտեց, իսկոյն նկարչաց շարին մէջ յատուկ տեղ մի գրաւեց իւր « Ուիւելլա » կենդանագործով, զոր նկարած է նախահոգիայէական դպրոցին ոգոյն համեմատ, փափուկ և զուտ անգղիական դէմքով : Չարմանալի է արուեստագիտիս հոգեկանութիւնն, թէպէտ և նա երբեմն զբօսեցրնող տեսարաններ եւս կու՞նկարէ, իւր այն զարմանալի խառնուածով իբրաւ հակառակ զգացմանց և բերմանց, որ յաճախ կ'որոշէ յայլոց անգղիաստացոն բնութիւնը : Ահաւասիկ ասոր « Զուլեակ սիւղոյ » նկարն, սքանչելի իւր նրբութեամբ. (Տես Բ) :

ԱՂՈՒՓՈՑ ԹՊԱՄԱՍԻ : — Երեւալ ի Լիւվոնոյ՝ ի 15 յանուարի, 1851 : Հայրն ըզնա վաճառականութեան որոշեց, յորմէ զօրաւոր բերմամբ փոխեցաւ յարուեստ նկարչութեան, և յամի 1874 անցաւ ի փլորենտինա՝ Կարոլոսի Մարկոսի (որդոյ) խնամոց տակ : Կարճ ժամանակէ մի վերջ անկէց ալ հրաժարեցաւ, արտիստեա չախորժեցաւ այնպիսի ոճով, այսինքն, մասնաւոր դպրոցի մի կանոններով կաշկանդուած նկարչութիւնը. ուստի գնաց միայնակ գիւղերու մէջ շրջելու և առողջ բնութեան տեսարաններէն նկարներ հանելու. և ըստ այսմ, իրական նկարչութեան ջերմ հետեւողաց մին եղաւ :

Հաս ընտելութեանց և զովասանութեանց նիւթ եղած է իւր « Ետտ եղեման » նկարն, այն ընդարձակ դաշուն՝ ծածկուած առաւած կաղամբերով. իսկ միւսն՝ « Սոյլ շուգոյ. » 1884 տարւոյն ի Տորին կազմուած Հոնդիսարդուութեան մէջ՝ ընտրելագոյններէն մին գատուեցաւ : Սա 1887 յղեց ի վենետիկ հետեւեալ երկու նկարքը, « Երկաթիւնայ գաւառական հանապարհ » և « Գարնանային մեղմ օր մի » : Իսկ ի 1894 ի Միլան, « Նաւակաքարը » և « Քաղոց ծիծալալողոյ » : Արդի թոյմասիայ զորոց մէջ տեսնուած դէպ յիւրակաւութիւն միտումն՝ ազնուացած է այն հեգանդի զգացմամբ, որով կու պատկերէ դարպ և զգնութիւն : Ահաւասիկ այս հեղինակիս

գիւղական ուրաի տեսարանն մի, « Երգ տեւրեւաքանցի », այսինքն, քաղած լազուտաները փենդիելու ժամանակ գեղջկաց երգն. (Տես Գ) :

ՓՐԵՒԵՐԻԿ Յ. ՇԱՏՏԵԼ : — Երեւալ յամի 1856 ի Լէիդա և այժմ կ'ապրի յԱյա : Այս արուեստագիտիս թէ ծովային և թէ ցամաքային բնանկարը շատ ժողովրդական նացած են ի Հոլլանդայ, ուր թանգարան մի չկայ՝ որ ասոր տասնակաց մին կամ աւելի յունենայ. որոյ զործեր բազմազոյն մասամբ վաճառուած են ի Գերմանիա, յԱնգղիա և յԱմերիկա : Ասոր զործն է նա և մեր հօսդած « Գետափունը » նկարն. (Տես Գ) :

ԱԼՈՑԻՍ ԴԵԼՈՒԳ : — Երեւալ ի Բուզանոյ (Տիրոյ)՝ յամի 1859 ի 5 մայիսի : Սա իւր պատանեկութեան ժամանակ զբաղեցաւ իմաստասիրական ուսմամբը, և անագան ուրեմն սկսաւ գեղարուեստական դաստիարակութիւն մ'առնուլ ի վիեննայ, առաջնորդութեամբ Լ. Կ. Միլլէր արեւելագէտ նկարչին : Հօն ի Հոլով երթալու միջանակն ընդունելով, եկաւ յիտալիա և երկու տարի հօս մնաց : Այժմ ի Միլանի կու բնակի, ուր շատ յարգի նկարներ յօրինեց, որպիսի են. « Հանապարհ թաչի », « Գերեզման Ալաբիկոսի », և այլ բազմաթիւ կենդանագրեր : Մենք եւս կ'ընծայեմք հօս սորա « Մարտի հողներ » նկարը. (Տես Դ) :

ԼԱՌԻՍՏ ՏԻԻՔՍԷՆ : — Երեւալ ի Կոպենհագեն՝ յամի 1853, յ9 զեկտեմբերի : Երբ նախական ուսման աւարտեց ի հայրենիս, 1875ին՝ հոկտեմբերի մէջ՝ գնաց ի Պարիս առ Բոննաւ : 1879 տարւոյն Տիւրքէն ինք զինքը ծանօթացոյց Դանիացոց իւր մի քանի՝ ըստ կարելոս-Դարանի յօրինած՝ անխայց կենդանագրերով և մի այլ մեծ նկարով, « Եւալցուն իւրոյ կէտ ձկան Յուլանդի-արեւմտեան ափանց վրայ » : Այս յամի 1883 առ ժամանակ մի յիտալիա զգեղեցաւ. յեա որոյ դարձաւ և հաստաւ աւելցաւ իւր ծննդեան քաղաքին մէջ, ուր և անուանեցաւ նկարիչ արքունի պալատան : Ամենածանօթ և համբաւաւոր էն հեղինակիս երեսուն և երկու հսկայ նկարքն, որ կու ներկայացընեն (Դանիաց) արքունի տօմը : Նմ.

կարիս « Գարն Զվարտաց ի վերջալուսն » նկարն՝ սրանցիկ է պատկերացուցած անաս-
րանին բնականութեամբ, երեկոյացեալ լուսոյ
խաղերով շրոց վրայ, որոց մէջ ընտիր է նա
և այն պէսպէս դիմաց և իրաց անդրադար-
ձութիւնն. (Տես Գ) :

ՅՈՎԱԾԷ ԲԵՆԼԻՈՒՐ : — Երեսու է ի
վայեանս, ի 1 հոկտեմբերի, 1855 ա-
մին. և սկսեալ ի 1878 ամէն՝ Հոռլմ բնա-
կող օտարազգի արուեստագիտաց գաղթակա-
նութեան կ'անդամակցի : Ասոր գործն է նա
և մեր այս « Երեւոյն յարձն » նկարն.
(Տես Ե) :

ՎԱԼԹԵՐ ՓԻՐԼ : — Նշած է ի Բրես-
լայի՝ յամի 1859, ի 29 օգոստոսի, և

այժմ կու բնակի ի Միւնիխ Բաւիերայի :
1879էն սկսեալ մինչեւ 1888 աշակեր-
տեցաւ Միւնիխի Գեղարուեստից նկարանին,
երբ հոն կու դասախօսէր Լուդվիգ Լոփց :
Ճարտարիս բնագրողն է զգայնութիւն, ու
բով գրեթէ միշտ որտի հարուող նիւթեր
պատկերելու կու բերուի : Սորա գլխաւոր գոր-
ծերն են, « Տօնական դալրոց », որ կու գը-
տուի Բուզա-Պետտի Թանգարանի մէջ, « Հա-
ւատը », զարդ Լիպսիոյ պատկերասրահին,
« Սգաւոր տուն », յատուկ Բրեսլայի թան-
գարանին, և « Հայր մեր » : Առնց կարգին
դասելի է և այս մեր հօս դրած « Բժըշ-
կութիւն » նկարն. (Տես Ե) :

Շարայարեյի.

ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՑ ԱՏԵՆԻ ՄԷՋ

պաշտպան փաստաբանի մը ճորտրիեակ՝ բայց կրթիւ աստեմարանորիւնը ,

Գաղղիոյ տնտեսութեանց ատենի մը
մէջ դէպք մը պատահեցաւ, որուն վրայ ուշ
դնել կ'արժէ :

Ամբաստանելոց աթոռին վրայ նստած էր
ուժուատանամեայ պատանի մը, Էմիլ Կոստ
անուամբ, ապականեալ էակի մը տիպար :

Ատենին նախագահն կ'ըսէ իրեն .

— Կօստ, դու Ռօզին Մէնիէն սպան-
նեցիր իւր 8 ֆրանքը գողնալու համար. ան-
շուշա եթէ գիտնայիր այսչափ քիչ բան ու-
նենալը, չէիր սպաններ :

Կօստ. — Եւ ինչու : Ի՞նչ օգուտ հը-
նացեալ կամիքի մը աւելի կամ պակաս ըլ-
լալէն, ես որ և է գնով կ'աշխատիմ :

Նախագահ. — Բաւ լրութիւնդ նոյն իսկ
վայրենիները կարող է զղուեցնել : Հագիւ
18 տարեկան կաւ և արդէն լի ես դատա-
պարտութեամբք : Ո՞վ տորեցուց քեզ այս-
չափ անօրէնութիւն :

Կօստ. — Ի՞նչ գիտեմ ես :

Նախագահ. — Կը խոստովանի՞ս ու-
րեմն, ինչ որ քու վրայ կ'ամբաստանուի :

Կօստ. — Կը խոստովանիմ և եղածին
վրայ կը ծիծաղիմ :

Նախագահ. — Երդուեալ դատաւորքն թող
վճիւ տան : Խօսելու կարգը պաշտպանին է :

Արքեր. պաշտպանն. — Իմ գործն շատ
դիւրին է : Ամբաստանեալը լիովին կը խոս-
տովանի : Չի կայ պաշտպանութիւն մը՝ որ
կարենայ օգնել : Այնու հանդերձ, կ'ազեմ
քանի մը խօսք յաւելոյ : Եթէ արդարու-
թիւնը հաշիւ կը պահանջէ ամբաստանեա-
լէն իւր եղերան համար, ներեցէք ինձ որ
ես ալ հաշիւ մը պահանջեմ արդարութե-
նէն իւր վճողն վրայ : Ի՞նչ պիտի ըլլայ վը-
ճիւնը կ'անգիտանամ, ապայն շատ լաւ գի-
տեմ որ կայ հոս անձ՝ եղեւնադոր քան
զյանդաւորն : Այս եղեւնադործը, կամ լաւ
ևս ըսեմ, այս եղեւնադործերը, պիտի ամ-
բաստանեմ ձեզ : Չարագործերը դուք էք,
սով տեսքը, որք հոս քաղաքային ընկերութիւնը
կը ներկայեցնէք, և այս ընկերութիւնը կ'ըս-
տիպուի պատժելու այն յանցանքները, զորս
իւր անհոգութիւնը կամ իւր չար օրինակը